մլ ձզ Ապա եթէ ծնօղն զգուշացուցանէ քահանա-յին, և նա վասն իւր աշխատութեան, և կամ վասն այլ զբաղման՝ անփոյթ արար, և մանուկն մեռաւ. քահանայանալ ոչ կարէ. զի ոչ զգուշացաւ հօտին. Գ. ամ ընդ ունկնդիրս կացցէ. Ա. ամ, ընդ ձեռամբ. Բայց եպիսկոպոսն մարդասիրութիւն արասցէ, շնորհելով զպատիւ քահանայութեան.

մլա ձէ Թէ հանդիպի քահանային ի մեծի խորհրդին, և բերեն զմանուկ երեխայ մերձ ի մահ. թողցէ քահանայն զխորհուրդն ի հրեշտակս սպասաւորել, և կնքէ զտղան, և ելեալ տացէ կնիք, և անդրէն մատուցեալ կատարեսցէ զխորհուրդն. և արասցէ սկիզբն ի բանէն՝ զոր եթող.

մլբ ձը Երեխայ՝ թէ եկեալ ի մկրտութիւն, և քահանայն սկիզբն արարեալ՝ հասանէ վախճան երեխային՝ առ սուրբ աւազանին, առցէ ի գլուխ զսուրբ խորհուրդն, և տացէ կնիք, զի աւանդեցաւ ի ձեռն հրեշտակին, և պատուով թաղեսցէ.

մլգ ձթ զԵրեխայ՝ մի ոք իշխեսցէ պահել առանց կնքոյ, քան զվեց օր՝ կամ զեօթն, ապա եթէ պահեսցէ ոք և վախճանի, քահանայն անպարտ է ի պատժոյ.

Գրիգորի Աստուած. ե ջծբ Որ ոք արհամարհեսցէ զսուրբ մկրտութիւն՝ որ ի հայր, և յորդի, և ի սուրբ հոգին, որ որդեգրէ զմատուցեալսն՝ որպէս թէ ի լոկ ջուր ինչ նայելով, և ոչ հաւատայ տեառն՝ եթէ ոք՝ ոչ ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ, ոչ մտանէ յարքայութիւնն երկ-նից՝ առ սուտ կալցէ զայսոսիկ, եղիցի նզովեալ, ապա եթէ ողջախոհեսցի՝ ընկալջիք ութնամեայ ապաշխարութեամբ.

Ներսէս Մեծի. ժե ջղբ Մկրտութիւն ոք ծուլութեամբ մի իշխեսցէ առնել, որպէս լըսեմք, այլ երկիւղիւ և զգուշութեամբ, բուրվառօք և ճրագով և առագաստեալ վարագուրօք որպէս վայել է լուսաւորութեան սուրբ աւազանին. և աւազանն կանգնեսցի յեկեղեցւոջ կամ ի տան պաշտամանն, թէ քարաշէն իցէ, թէ զինչ և իցէ՝ երկիւղածութեան արժանի, և բաւականութեամբ գործոյն, լուսաւորութեամբ, լայնութեամբ, և խորութեամբ, զի բաւականաչափ ծածկեսցէ ջուրն զհասակ մանկանցն՝ որ մկրտեսցին, և ի տունս շինականացն քահանայ մի իշխեսցէ առնել մկրտութիւն, բայց վասն երկիւղի մահուն՝ թէ վտանգ ինչ իցէ.

Նէրս. Բ. ԺԹ ՌԼԴ

Վասն որ մանուկն մնասցի առանց կնքոյ ի ծուլութենէ, երեք ամ ապաշխարեսցեն։

Սահակայ Մեծի ԻԴ ՌՂԹ

Մկրտութիւն առնել երկիւղածութեամբ, և կանայքն ի ժամ մկրտութեան մերձ առ քահանայսն մի իշխեսցեն կալ, որպէս սովորեցին ոմանք առնել յանդգնաբար, և մկրտել ընդ նոսա, այլ ի տեղւոջ իւրեանց աղօթեսցեն։

ԺԷ ՌԾ

Եւ սարկաւագունք մկրտութիւն մի իշխեսցեն առնել, ապա եթէ արասցեն, լուծեալ եղիցին ի սարկաւագութենէն հանդերձ պատուհասիւ, զի ոչ է սարկաւագն քահանայ, այլ սպասաւոր քահանային։

Մակարայ ՌԾԿ

Թէ արժան իցէ սարկաւագաց մկրտութիւն առնել, և կատարեալ իցէ խորհուրդն, գիտութիւն լիցի քրիստոսասէր եղբայրութեան ձերոյ, զի եպիսկոպոսաց և քահանայից միայն է իշխանութիւնս այս, և սարկաւագի զայս առնել չէ արժան, քանզի սպասաւորք են և խափանեալ է այս առ ի նոցանէ, և աւելի է խնդրելն՝ թէ կատարեա՞լ է առ ի նոցանէ մկրտեալն. բայց նախ պարտ է քննել, թէ սովորութիւն իցէ գաւառին այնմիկ՝ սարկաւագացն մկրտել. և եթէ գտցի ոք արարեալ՝ ընդ անմեղութեամբ է վասն անգիտութեան կարգաց եկեղեցւոյ, զի սովորութեան գաւառին զհետ չոգաւ, իսկ եթէ գիտէր զկարգ եկեղեցւոյ, և անց զնոքօք, եղիցին իվերայ նորա պատիժք ըստ կարգի յանցանացն։

Ք ՌԾԿԱ

Եթէ աւազան սրբեալ ո՛չ ունիցին, և յորպէտ ամանի մկրտեն, զի եթէ ո՛չ էր մերձ եկեղեցի շինեալ ի փառս Աստուծոյ, և ի մուտս ժողովրդոց, առանց մեղադրելոյ արդեօք էր, և եթէ եկեղեցի ունիմք պարտ է և մկրտատունս առնել և աւազան՝ յորում մկրտէ, որ գալցեն յուղիղ հաւատս բարեպաշտութեան, ապա եթէ դիպեսցի ոք հիւանդ՝ ուր ո՛չ իցէ եկեղեցի և կարգաւոր աւազան, չէ արժան արգելուլ, որ կամիցին մկրտել, այլ կատարել զխորհուրդն և զմկրտութիւն առանց կարգաւոր աւազանին՝ վասն ի հարկէ պիտոյիցն, զի մի զրտեցի պարտական փրկութեան՝ խափանելով զմկրտութիւնն, զի հոգին սուրբ ըստ մաղթողին տայ զշնորհն՝ և ըստ ամանին ո՛չ լինի արգելեալ, և յամենայն ժամ փափագեալքն բաւականան շնորհի հոգւոյն, և ո՛չ ի գլխաւոր տօնսն միայն է կատա-

րելութիւնն, զի առաքեալքն՝ ոչ ըստ ընտրութեան տօնիցն մկրտէին՝ այլ ըստ բաւականի եկելոցն՝ լուսաւորէին ի ջուրցն վերստին ծնանելով, և երեքկին ընկղմամբն՝ թաղեալ ի ջուր սուրբ աւազանին, զերեքօրեայ թաղումն տեառն նշանակեմք յանձինս մկրտելոցն, զոր և աստուածային առաքեալն՝ յայտնապէս ցուցանէ ասելով՝ թէ թաղեցաք ընդ նմա մկրտութեամբն, նմանողք եղիցուք նմանութեան մահու նորա, զի նորոգութեամբ յարութեանն հաղորդ լինիցիմք նմա ի կենանս յաւիտենից, և այսպէս ուղիղ դաւանութեամբ՝ ձեռըս ի վերայ դնելով՝ պարգևեալ լինի հոգին սուրբ, ի փրկութիւն մեզ. լուսաւորել զկոչեցեալսըն յորդեգրութիւն, և հաւատովք օծանիմք յիւղ սրբութեան. և այսպէս ըստ իւրաքանչիւր եղեալ մասանց՝ կարգք սրբոյ եկեղեցւոյ յօրինին. ոչ ելանելով ըստ եդեալ սահման, և գլխաւորեալք ըստ երկնաւորացն դասուց, որպէս ուսաք ի հարցն հոգևորաց՝ յաշակերտաց առաքելոցն սրբոց։

Յովհ. իմաստ. ժդ. անգլէ

Պարտ և արժան է զերախայիցն ձեռնադրութիւն և զօծումն և զհրաժարիլն և զխոստովանիլն՝ առ դուրս մկրտարանին կատարել, և ապա տանիլ ի ներքս՝ ուր աւազանն է՝ և մկրտել։

Սիօնի կթղ. ի ամլե

Իսկ եթէ զիպեսցի երեխային հիւանդանալ՝ և քահանային հեռի իցէ, և ընթանան ընտանիքն առ քահանայն ի կոչել, անդէն՝ ուր դիպաւ քահանայն՝ սկսցի զկարգ մկրտութեան յանուն երեխային, և եթէ դէպ լինիցի երեխային մեռանել, յորժամ եկեսցէ քահանայն, կնքեսցէ սուրբ նշանաւն զգլուխն՝ և թաղեսցէ ընդ Քրիստոսի մկրտեալսն։

Ներս. Շնորհ. խբ. անդ

Եթէ եկեղեցի ոչ լինի, և երեխայն ի մեռանել է, պարտ է ի տան աւազան օրհնել յոր ինչ և իցէ նիւթոյ վասն հարկին՝ և մկրտել. և եթէ հաղորդ լինի առ ձեռն՝ հաղորդել, և անօթն՝ թէ այլ ոչ է պիտոյ, թաղեսցի ի սուրբ և յանքոյթ տեղւոջ, և ջուրն մի լիցի ի կոխումն, և ոչ օրհնեալ անօթն՝ յայլ ինչ գործ, և մի առանց օրհնելոյ աւազան՝ մկրտել ի վայրապար ամանի, բայց թէ հարկն կարի սաստիկ՝ մկրտեսցէ, բայց զանօթըն՝ յայլ գործ մի անցուսցէ։

Ը

ՅԱՂԱԳՍ ԶՍՐԲՈՑ ՅԻՇԱՏԱԿՍ ԿԱՏԱՐԵԼՈՑ ԵՒ ՊԱՏՈՒԵԼՈՑ ԶՊԱՏԿԵՐՍ ՆՈՑԱ·

Առաքելոց իէ. իէ — *Կարգեցին առաքեալք և եղին հաստատութեամբ, եթէ ոք ելանիցէ յաշխարհէ ճշմարիտ վախճանիւ, և կամ խողխողեալ յանօրինաց՝ վկայ հաւատարիմ վասն անուան Փրկչին, խոստովանելով զՔրիստոս ի նեղութիւնս՝ որ վասն անուան նորա լինին, արասցեն զյիշատակս նոցա յաւուր մահուան նոցա, և զնշխարհս ոսկերաց նոցա ի պատիւ առեալ փառաւորեսցեն զՔրիստոս, որ ետ նոցա զայնպիսի համբերութիւն ի յորդորումն և ի թողութիւն մեղաց մերոց·*

Եփրեմի է ամխղ — *Իսկ զմարտիրոսաց յիշատակս փոխեսցեն ի չաբաթու և կիւրակէի՝ և անխափան կատարեսցեն·*

Յովհ. Մանդ. է ուիբ — *Եւ որ ի չորեքշաբաթի և յուրբաթի՝ մարտիրոսաց յիշատակ առնէ տօնս զենմամբ՝ մեղքեն, զի եթէ ի կարգի էր, ապա ի Զատկի ուրբաթի օրն՝ պարտէր առնել մատաղ, զի արարիչն երկնի և երկրի յուրբաթուն խաչեցաւ, և ընթերցուածք և սաղմոսք և աւետարանք՝ այն օրն է յիշատակ, և ամենայն մարդիկ՝ այն օր ազատեցան ի մեղաց, և դրախտն՝ այն օր բացաւ ի ձեռն աւազակի, և զմարդիկ ի ծառայութենէ՝ այն օր ազատեաց, և ի սատանայէ՝ այն օր զերծոյց Քրիստոս, բայց կարգ եկեղեցւոյ՝ զայն օր զատ պահել հրամայէ և փոխանակ նորա ունել զայլ վեց աւուրսն մինչև ցպէնտէկոստէն·*

Ժողովոյն Սոոյ Դ Դ — *Ընդունել զնկարագրութիւն պատկերաց Փրկչին և ամենայն սրբոց, և մի խոտել զնոսա՝ իբրև զպատկերս հեթանոսաց·*

Թ

ՅԱՂԱԳՍ ՈՉ ՀԱՂՈՐԴԵԼՈՑ ԸՆԴ ՀՐԷԱՅՍ ԸՆԴ ՀԵԹԱՆՈՍՍ, ԸՆԴ ՀԵՐՁՏԻԿՈՍՍ, ԵՒ ՈՉ ԵՐԹԱԼՈՑ Ի ԴԻՐՍ ՆՈՑԱ·

Առաքելոց ժղ ժղ — *Կարգեցին առաքեալք և եղին հաստատութեամբ եթէ որ սիրէ զհրէայս և հաղորդի ընդ նոսա, կցորդ եղիցի Յուդայի իսկարիովտացւոյ, որ*

սիրեաց զՀրէայսն, կամ զՀեԹանոսս, որ երկիրպագանեն արարածոց՝ փոխանակ արարչին. մի՛ մտցէ յեկեղեցի՝ և մի՛ բնակեսցէ ի մէջ հաւատացելոց, և եԹէ իցէ ի միջի նոցա՝ մի՛ Թողցեն զնա, այլ որոշեսցեն և զատուսցեն ի բաց յինքեանց, և մի՛ կացցէ ի միջի նոցա. զի մի՛ արմատ դառնուԹեան ի վեր երևեալ՝ պղծեսցին նովաւ բազումք։

Առաք. ի ձեռն Կղեմայ. է խա Եպիսկոպոս՝ կամ Էրէց՝ կամ սարկաւագ զտուրբ չարչարանաց զօրն նախ քան զգարնանային զուգաւորուԹիւնն՝ Թէ ընդ Հրէայսն կատարեսցէ, լուծցի։

Կղ ճ ԵԹէ ոք ի քրիստոնէից ՁէԹ տարցէ ի մեհեանս հեԹանոսաց, կամ ի ժողովարանս հրէից ճրագունս, լուծցի և որոշեսցի։

կե գԹ ԵԹէ ոք եպիսկոպոս կամ երեց կամ այլ ոք ի ժառագաւորաց, պահեսցէ ընդ հրէայսն, կամ տօնեսցէ ընդ նոսա, կամ ընկալցի ի տօնից նոցա ընծայս, որպէս Թէ բաղարջ կամ այլ ինչ յայսպիսեաց՝ լուծցի։

Նէկկիոյ Բ. կգ մԻԹ Ո՛չ է պարտ օրհնել ընդ հրէայս, կամ ընդ հերձուածողս կամ ընդ հեԹանոսս, և ո՛չ տօնական ընծայս առնուլ։

ձե մծա Ո՛չ է պարտ հերետիկոսաց ընդ մեզ յաղօԹս կալ.

ձղ սծբ Ո՛չ է պարտ ի հանգստարանս, կամ ի վկայարանս հերետիկոսաց երԹալ։

ձէ մծգ Ո՛չ է պարտ ուղղափառաց եկեղեցւոյ՝ ընդ հերետիկոսաց ամուսնուԹիւն առնել։

Ցնտխո-քայ ա կե Ամենայն ոք ով և համարձակեսցին և լուծցեն զսահմանս սուրբ և մեծ ժողովոյն որ ի Նիկիա ժողովեցան, և զառաքելոցն՝ իբրև էր անդ աստուածապաշտ և աստուածասէր Թագաւորն Կոստանդիանոս վասն ամենասուրբ տօնից փրկուԹեան՝ կապել և մերժել յեկեղեցւոյ Թէ կացցեն ևս հակառակուԹեամբ ընդդէմ դառնալ՝ որ ինչ բարեգոյնքն կամեցան կարգեցին, և այս ասացաւ վասն աշխարհականաց. Ապա եԹէ ոք ի գլխաւորաց և յառաջնորդաց եկեղեցւոյ՝ եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ յետ սահմանիս այսորիկ՝ համարձակեսցի շրջել և խռովել և խանգարել և փոփոխել զկարգս եկեղեցւոյ՝ և առանձինն լինել, և կամ

ընդ հրէայս կատարեսցէ զսօնս. զայսպիսին՝ սուրբ մեծ ժողովն ասէին առ ետեղ յայնմանէս օտար համարեցան լեկեղեցւոյ, զի ոչ յանձին միայն մեղան՝ այլ զբաղումս ապականեցին և թիւրութեան պատճառք եղեն, ոչ միայն զայնպիսիսն հատանել և ընկենուլ և որոշել ի պաշտամանէ եկեղեցւոյ, այլ և որք սոցին հաւասարել համարձակեցան լետ մերժելոյ զայնպիսիսն, և որք մերժեցանն՝ խափանեսցին ևս և յարտաքին պատուոյն, որ սուրբ կանոնք և Աստուծոյ քահանայութիւն ընկալեալ զտանիցի։

Լաւ. դիկեալ թ զղ. Զէ մարթ համարձակիլ երթալ ի հանդիստս և ի դիրս և ի բնակս, կամ որ ասին մատրունք ամենայն այլազգեաց, առ ի պէտս ինչ աղօթից կամ մխիթարութեան. այլ զայսպիսիս՝ թէ ի մերոց հաւատացելոց են մերժել արժան է և կապել լեկեղեցւոյ՝ մինչ ապաշխարել և խոստովանել ըզյանցանսն, և ապա խառնեսցին։

ժ զղթ. Զէ մարթ՝ ոչք լեկեղեցւոյ մերոյ են ի պէտ պէտ՝ և ի ցոպ հարսանիս այլազգեաց՝ մերձեցուցանել զուստերս և զդստերս՝ կին տալ նոցա, կամ կին առնուլ ի նոցանէ։

ա նի. Զէ արժան առ ամենայն այլազգիս խնամութիւն առնել, կամ առ հերձուածողս, բայց եթէ՝ յանձն առնուցուն հաւատալ ի սուրբ կաթուղիկէ եկեղեցի։

ը ճիա. Զէ պարտ յայլազգեաց օրհնութիւնս առնուլ, զի չէ օրհնութիւն, այլ անմտութիւն և բարկութիւն։

ՀԴ նիզ. Զէ մարթ քրիստոնէի թողուլ զմարտիրոսս Քրիստոսի, և երթալ առ սուտ մարտիրոսս այլազգեաց, որք օտարացեալք են յԱստուծոյ, և որք յայնպիսիսն մերձեցին՝ նզովեալ լիցին յԱստուծոյ։

ՀԷ նիզ. Ոչ է արժան քրիստոնէից՝ զհրէից կամ զայլազգեաց զսօնսկան պատարագս նոցա՝, կամ ընդունէրս ընդունել, զի մի գոցուք հաւասարողք սօնից նոցա՝ և մեղաց։

ՀԸ նիէ. Զէ արժան ի սօնս հեթանոսաց հաւասարիլ՝ որ առանց Աստուծոյ է։

Գրեդ. լաս. դ շժա. Որք երթան ի տունս հեթանոսաց, և ուտեն և ըմպեն անխտիր, երեք ամ, արտաքոյ ապաշխարեսցեն, ապա արժանի լիցին հաղորդիլ։

Բարս. Բ. ճիբ չղէ — Որ զմանկունս անհաւատից ի սուրբն առնուն, Բ. ամ, ընդ ունկնդիրս կացցէ, և մի ամ, ընդ ձեռամբ։

ճիդ չղթ — Ոչ է արժան ճաշակել հաւատացելոց ընդ անհաւատից, և ոչ համբուրել, և ոչ ի տունս նոցա մտանել, և եթէ ոք յանդգնի, նզովեալ եղիցի։

Ներս. Մեծի. ԼՂ ոժգ — Եւ մի աղանդաւորացն երբէք վանս տալ, զի ոչ հրամայեն կանոնք առաքելականք։

Ներս. Բ. ժդ ոլէ — Վասն որ՝ ընդ հեթանոսի ուտէ և ըմպէ, աւելի քան զհաց և զգինի, պարտաւոր է ապաշխարել ըստ յանցանացն։

իը ոխը — Վասն որ՝ ընդ հեթանոսի կայ և մեղանչէ ընդ նոսա, եօթն ամ ապաշխարեսցէ։

Կիւրղի Աղէքս. Դ ոկա — Որք զժառանգս հեթանոսաց առնուն ի սընունդ, այնպէս է՝ որպէս ոք զօձ խնամարկեալ պաշտեսցէ ի ձեռս սովորութեան ընդ ամուսնացելոցն ընդ հեթանոսական ազգին, ուսան զանաստուածպաշտութիւնս նոցա, նոքա զթովչացն ապաշխարութիւնս կրեսցեն՝ Գ. ամ, արտաքոյ ապաշխարեսցեն. և Գ. ամ, ընդ ապաշխարողսն եղցեն, և ապա հաղորդեսցին օրինաց։

Յովհ. Իմաստս. լթ ումժը — Ոչ է պարտ ամենեին՝ անխտիր լինել, և հաղորդութիւնս առնել ընդ հերձուածողաց, այլ խորշել ի նոցանէ, և չհաւասարել ընդ նոսա՝ ի հոգեկան և ի մարմնական սեղանս, զի պատկառեսցեն և փափագեսցին միաբանել ընդ ուղղափառութեան աւանդիչս։

ԼԲ ումժե — Ոչ է պարտ ի չար աղանդ մծղնէիցն տեղիս՝ որ կոչին պօլիկեանք, օթել ումեք, և կամ լարել և խօսակից լինել, և երթևեկութիւն առնել, այլ ամենեին հեռանալ ի նոցանէ, գարշել և ատել զնոսա, զի որդիք սատանայի են, և լուցկիք յաւիտենական հրոյն, և օտարացեալք ի մերոց կամաց արարչին, եթէ ոք իցէ՝ որ յարեսցի ի նոսա, և ի սիրելութիւն և ի բարեկամութիւն եկեսցէ, պարտէ զայնպիսին խոշտանգել և ծանր պատուհաս ի վերայ դնել, մինչև զգաստասցին և առողջասցին ի հաւատս, ապա թէ՝ դարձեալ ի նմին գտցին, վերստին զայնպիսին հրամայեմք ամենեին հատանել և արտաքս ընկենուլ՝ իբրև զժանտախտս յանդամոց եկեղեցւոյ Քրիստոսի. զի մի

արմատ դառնութեան ի վեր երևեալ նեղիցէ և նոքաւ բաղումք պղծիցին։

Ի՞նչ կիրք։ ՈՐք դերեվարք լինին լանօրինաց, և ակամալ առ քաղցի, կամ ի հարկէ նոցա՝ կերիցեն լանսուրբ և ի պիղծ մսոյ, յորժամ դարձ արասցէ նոցա Աստուած լիւրեանց տեղիս, ամ մի՝ ՀԵրմեռանդ սրտիւ ապաշխարեսցեն, արտասուօք, պահօք և աղօթիւք, արտաքոյ եկեղեցւոյ, և եթէ սխալանք այն իսկ իցեն, հաղորդեսցի օրինաց, և զուրբաթ և զչորեքշաբաթ խսպառ պահեսցէ, նոյն կանոնքդ եղիցի և առ կանալս, որ ակամալութեամբ պղծին ի հեթանոսաց։

ԳԱՂԱԴՍ Վ.ԱՇԽԱՐՈՒԱՑ, ԵՒ ԿԱՇԱՌԱՐՈՒԱՑ

Առաքելոց ժը Կարդեցին առաքեալք և եդին հաստատութեամբ, եթէ՝ որ փոխ տալ՝ և առնու վաշխս, և տոկոսիս, և չահի չահս ազահութեան, այնպիսին՝ մի համարեսցի ընդ հաւատացեալսն, և մի կացցէ ի կարգ պաշտաման քահանայութեան, զի ոչ լուաւ զպատուէրն, զոր ետ արարիչն՝ Մովսիսի, թէ՝ պատուիրեա որդւոցն Իսրայէլի. զի մի պահանջեսցեն զփոխս՝ ի մերձենալ ամին թողութեան և լամին եօթներորդի, որչափ ևս առաւել պատժի արժանի համարեցիք զայժմուս։

Առաքի ի ձեռն Կղէմայ ԺԷ Եպիսկոպոս, կամ երեց, կամ սարկաւագ, վաշխս և տոկոսիս պահանջել ի փոխառուացն, կամ դադարեսցին, կամ լուծցին։

Հարց հեռանողաց ԺԸ Ի հերձուածող բանից, եթէ եպիսկոպոս ոք, կամ երեց, կամ մանողն, որք և իցեն, անսացեալ խրատու առաքելոյն ի քէն ի բաց որոշեսջիր. քանզի բաղում ասողք են թէ՝ մա՛ կաշառս, և չեն մեղք ասէ, մատնեա զեղբայր քո՝ և անմեղ ես, այնպիսեացն եթէ ներեսցէ ոք, կամ ախորժեսցէ, կցորդ լինիցի չարեաց գործոց նոցա։

Նիկիոյ ԺԹ Վասն այնոցիկ՝ որ ի կարգին են և ի կանոնին, և լուխտ եկեղեցւոյ, և լաղանութիւն և ի զոչաքաղութիւն անկանիցին, զարծաթ իւր ի վարձու տացցէ և տոկոսեօք պահանջեսցէ և մոռա-

նալցէ զբարբառն աստուածային գրոց, որ ասէ՝ թէ զարծաթ իւր ի վարձու ոչ տացէ, և մանաւանդ դալթ ի դալթ ի պաշտօնն, թուլասիրտ լաղթս, մեղկ և ծոյլ ի հաւատս, այնպիսումն՝ ասէ դիր, վայ որոց թողեալ լցն զուսումն մանկութեան և մոռացեալ զուխտն աստուածային. կամ եղև մեծ ժողովրդն՝ զայնպիսիսն մերժել ի կարգէն, և կամ բարեսէր կամօք լուղղութիւն ածել։

Նիկ. Բ. ժէ մխա

Ոչ է պարտ ժառանգաւորաց, տոկոս առնել, կամ տաւանորդս շահիլ։

Ղաւ. դիկեալ. և ՀԳ

Ոչ է արժան քահանայի՝ փոխ տալ, և վաշխս և տոկոսիս պահանջել, և ոչ բնաւ՝ փոքր ինչ զտոկոսեաց մասն առնուլ։

Քաղ. առաք. ժբ ՃՀԷ

Իսկ եթէ յանդգնեալ եպիսկոպոսն վասն կաչառուոյ, կամ վասն բարեխօսութեան, կամ վասն մերձաւորութեան, հրաման տացէ այնպիսւոյն քահանայութեան, տացէ վրէժս լաւուրն դատաստանի՝ յաններելի տանջանսն։

Գրիգ. Լուս. դ լա

Քահանայ՝ որ զարծաթ իւր ի վարձու տալ, մերժեսցի լեկեղեցւոյ։

ԻՂ ՀԳ

Եթէ ոք ի քահանայից, կամ յաշխարհականաց, առցէ կաշառս եկեսցէ անէծքն Սիմովնի կախարդի ի վերայ նոցա, և կցորդ եղիցին կաշառառուն ցուդալի մատնչի, և գ ե ե զ ի քորոտութեամբն այրեսցին ոդիք կաշառառուացն։

Ներս. մեծի խ ուէ

Վասն երկրապարացն՝ որ մանրամասն ասեն ունել սխալանս, Գ. եմ ապաշխարեսցէ։

Ներս. Ներշ Մատիկ. Նար. լե ակդ

Այլ ոմանք ձիարոյծք, և վաճառականք, և վաշխառուք, փոխանակ կրօնաւորութեան՝ շահաժողովք, լայմեհետ դադարեսցին և ապաշխարեսցեն զմեղսն՝ զոր մեղան, ապա թէ ոչ՝ յանդիման արժանի գործոցն՝ պատիժս կրեսցեն։

ԺԱ

ՑԱՂԱԳՍ ՁԸՆԴՈՒՆԵԼՈՑ ԶՄԿՐՏԵԱԼՍՆ ՑԱՆՀԱՒԱՏԻՑ, ՈՐՔ ՄԻ ԱՆԳԱՄ ՈՒՐԱՑԵԱԼ ԿՐԿԻՆ ԴԱՌՆԱՆ, ԵՒ ՄԿՐՏԵԼՈՑ ԶԱՆՀԱՒԱՏՍ

Առաք. ժէ ժ

Կարգեցին առաքեալք և եղին – հաստատութեամբ, եթէ ոք հրէայ, կամ հեթանոս եկեսցէ և խառնեսցի լեկեղեցի, և դարձեալ թողցէ և եր-

թիցէ զիւր բնակութիւն. և դարձեալ կրկնեսցի և եկեսցէ ի նոյն պաշտօնն, զոր անարգեացն, մի ընդունիցիք, և մի խառնիցէք ի մէջ ձեր, այլ որոշեալ զատուսցի ի միջոյ ամենեցունց, և կացցէ ի նմին կարգի, ուր էր զառաջինն, և մի հաղորդեսցին ընդ նմա՝ որք ճանաչեն զնա։

Բարս. Բ ճծդ պլթ Թէ ոք յանհաւատից՝ առցէ իւր կին ի հաւատացելոց, և ինքն յօժարի ի հաւատս, նախ տեսցեն՝ սրտի մտօք զդարձ նորա, և ապա առցէ զօծումն մկրտութեան և զպսակն օրհնութեան, ապա եթէ՝ յառաջ ամուսնասցի, և զպսակն օրհնութեան պղծեսցէ, ապաշխարութիւն ըստ այնմ՝ որ ընդ անօրինին պոռնկի։

Սեանդ. եպս. Ը ուլթ Եթէ ոք ի հաւատս կացցէ ամիսս երկուս, և դարձցի յետս, նզովեալ եղիցի, որոշեցէք զամենայն աւուրս կենաց իւրոց, իբրև զչարագործ. զի զաւանդ տեառն իւրոյ կորոյս, և ընդ ապաշխարողս մի խառնէք յաւիտեան։

ԺԲ

ՑԱՂԱԳՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԴԵԱՆՑ, ԵՒ ՊՏՂՈՑ

Նիկ. Բ. ծա մժէ Եթէ ոք զեկեղեցական պտուղս, առանց գիտելոյ վերակացուին ծախիցէ, նզովեալ եղիցի։

ձա մխէ Պարտ և արժան է զգիտութիւն ամենայն եկեղեցական իրաց՝ ունել իշխանութիւն և երիցանց. իսկ որ առանձին ինչ է եպիսկոպոսին, ի դէպ է՝ որոյ կամիցի, թողուլ։

Գանգրեայ Է ւեէ Ոյք զպտուղ եկեղեցւոյ՝ կամին արտաքս քան զեկեղեցին առնուլ կամ տալ, և ոչ կամօք եպիսկոպոսին՝ կամ որ ձեռնադրեացն, զայնպիսին՝ յայսպիսի իրս, և կամօք նորա չառնիցէ, չգործիցէ, նզովեալ եղիցի։

Ը ւխը Որ տացէ կամ առցէ զպտուղ արտաքոյ քան զեպիսկոպոսն, կամ որ կարգեալն ի տնտեսութիւն տուրս տալոյ, տալին և առնլին, նզովեալ եղիցի։

Ս. Սահկ. մեծի ԼԲ ռճժե Զպտուղս՝ զնախնեաց կարգեալս՝ և զամենայն ընծայս ուխտից՝ զՁատկից և զազապաց և զայլոց տօնից, ժողովրդականք սիրով և լրջմտութեամբ հատուսցեն յեկեղեցիս, որպէս օրէն է՝ զոգ-

ւոյ և զմարմնոյ պատճառս կենդանութեան, մի՛ ար-
գելեալ խափանեսցեն ի կենդանւեաց հոգւոց։ Իսկ
եթէ ոք կամակորութեամբ ապստամբեալ յիւրմէ
քահանայէն և ի վանուցն արտաքոյ իւրոյ եկե-
ղեցւոյն՝ ի վանս ուրեք կամ յանապատս՝ զպատու-
ղըս և զպատարագս մատուսցեն, այնպիսին՝ ինքն
և ընդունողքն հեռի լիցին յօրհնութենէ և ի հա-
ղորդութենէ ընկերաց՝ հանդերձ ընտանեօք, մին-
չէ ապաշխարեսցէ և տուժեսցէ եկեղեցւոյն, վասն
զի եղև պատուիրանազանց և աստուածամարտ։

Խ ռճիդ Արդ՝ պարտ է մեզ զհատուցումն շնորհից՝
սահմանադրելով հաստատել յայտարարութեամբ,
թէ որպէս պարտ է հատուցանել ի վանս, և կամ
ամուսնացելոց քահանայից։ Տօն սրբոյն Յովհան-
նու մկրտչին և վկայի, զոր նախակարգեաց առա-
քեալն և խոստովանողն Քրիստոսի, և հայր վերս-
տին նորոգման բոլոր Հայաստան աշխարհիս՝ սուր-
բըն Գրիգորիոս, ի վանս՝ վասն ուխտադրութեան
պահօք հաստատեցաւ, և որ ինչ միանգամ՝ այլ
ինչ ուխտք են՝ ի վանս կատարեսցին. և շաբաթք,
և պահք, և ծոմք, զի ուխտիցեն կատարմունք, զի
ուխտաւորեալ են բնակիչք՝ շնորհիւ ուխտին կե-
րակրեսցին։ Եւ տօն ամենայն մարտիրոսաց, զոր
մատուռն կոչեն Վարդավառին, մատեղենիքն մի-
այն՝ պտուղ յամենայն արմտեաց՝ քոռ, քոռ, ի
ժողովրդականաց՝ և յամուսնացելոց քահանայից.
յառաջին արմտեացն, այսինքն յընտրոցն. զի զեղ-
ցին կալք ցորենոյ՝ և հնձանք գինւոյ, և իւղոյ, և
մի՛ վատթարացն՝ իբրև զկայենին, գուցէ զնորին
լուիցուք զպատուհաս։ Տօն սրբոյ յայտնութեան և
քառասնորդք նորին, և տեառնընդառաջն, և ա-
ռաջաւոր պահոցն կատարումն։ Տօն միջնոցն քա-
ռասնորդացն Զատկի, օր Ղազարու մ. ծի հինգշաբա-
թի զատկին. յորում կենարարն մեր՝ աւանդեաց
աշակերտացն՝ զխորհուրդս նորոյ ուխտիս, երկու-
շաբաթի զատկին ընծայլիւք և հաճոյակատար օժ-
տիւք՝ դիր Զատկին։ Տօն ամբառնալոյ Տեառն յեր-
կինս։ Տօն վախճանելոցն յելս հրոտից ամսոյ,
այսուքիկ տօնք ի վանս՝ յուխտաւորեալ տեղիսն
երթիցէ, նախ այն՝ զի կերիցեն պաշտօնեայք տեղ-
ւոյն, և հիւրք. զի քահանայից՝ թէպէտ և ամուս-
նացեալք իցեն, և աբեղայից, և ամենայն իսկ ուխ-
տի մանկանց՝ չէ արժան ի չէնս օթել, այլ ի
վանս, բայց եթէ՝ ուր ոչն գուցէ, և զկողոպուտ

վախճանելոյ տանուտերանց ի դաւտէ և յաթոռոյ, մինչև ցայնակ և ցդրգալ, և որ ինչ անձին զգեստըն է՝ մինչև ցկօշիկս և ցգօտիս, և անկողինն երթիցէ ի վանս, զի հանգիցեն ի վերայ նորա՝ անդր մտեալ հիւրք, և օրհնեսցեն։

խա ռճիդ Ագապն՝ որ մասնակմանաւ է, կէս կաշւոյն երթիցէ ի վանս, և երկու մասունքն ճրագուին։ Իսկ քահանայիցն՝ բովանդակն, և ոչխարին մորթն, և դմակն անդամովն և ճրագուն և խախացուոցն, և պանդուխտք՝ որ ի տունս քահանայիցն լիցեն, և նոցին եղբարց, նոյնպէս տայցեն և զամենայն պատարագս հասարակաց, կերիցեն պաշտօնեայք և աղքատք՝ բաղում մեծարանօք, և եղբարք հաւատացեալք, և զհաց տօնինօրեացն առհասարակ կերիցեն ամենայն պաշտօնեայք, նոյնպէս և զհաց ապաշխարողացն, զոր յաւուրս քառասնորդացն առնեն հանգիստ շաբաթու կամ կիւրակէի։

խբ ռճիե Բայց պատարագքն՝ որ ի վանս կատարին, երեխայրիքն՝ եթէ անապատ իցէ՝ գեղջն անդր տացեն, ապա եթէ ոչ՝ ամուսնացելոց քահանայից տացեն. քանզի չէ օրէն ումեք՝ զհասն տեառն ի յարկի իւրում թողուլ։

խգ ռճիզ Իսկ ամուսնացելոց քահանայիցն՝ եղիցին տօնք, շաբաթն Զատկի. և զատիկն սուրբ, և երկրորդ զատիկն, և չորրորդ զատկէն ի վեր, կիւրակէքն ամենայն, և պէնտեկոստն, և տօն սրբոյ Աստուածածնին, և վարդավառն, բայց ի մատաղէնեացն՝ որ է կատարումն քառասնորդացն առաքելական տօնից հաւատացելոց զատկի, և զպտուղ ամենայն արմտեաց՝ քոռ, քոռ։ Եւ պատարագք՝ որ մասնականաւ են, կէս կաշուն և ճրագուն. զերկուս մասունս ի վանս թողլով, զպաշտամանն և զլուացման՝ զմին տարցեն, զի լուացման մասնն, և որ ոչխարաւ, դմակն անդամով՝ և ճրագուն և խախացուոցն և մորթն, և զգեստն միայն տանտիկնացն վախճանելոց. և տօն բարեկենդանին և ողոգոմեանն մեծ. որ թարգմանի բարեբանեալ օր. և եթէ այլ տօն ոք կատարեսցէ՝ յանուն առաքելոց՝ և մարգարէից հասարակ եղիցի. զի այնպէս աներկուան և առանց հակառակութեան պաշտօնէիցն կացցեն զասք. գիտելով՝ որում շնորհի արժանաւորք եղեն, զի պարկեշտութեամբ և ուսումնասիրութեամբ վարեսցին. և մի եղիցին բանակռիւք, այլ սիրունք, արթունք և զուարթունք յամենայնի.

զի բաւական լիցին՝ խրատել զստահակսն և-
զուլացեալսն ածել ի կարգ հաւատոց, քանզի այդ
գործ է վարդապետի և հովուի։

խդ ռճիէ

Այս սահմանադրութիւն կարգաց, գրեցաւ հրամանաւ երանելոյն Սահակայ մեծի հայրապետին Հայաստան աշխարհի, ընկալեալ ի քաջ նահատակէն ի տեառնէն Գրիգորէ, թարգմանեցաւ միայն յունէ ի հայ։ Արդ՝ եթէ ոք անհնազանդեալ կանոնիս՝ նորաձևիլ կամեսցի զկարգեալ սահմանադրութիւնս. մի ընկալցի մասն և վիճակ ժառանգութեան Քրիստոսի Աստուծոյ, և որ ոք միաբանեալ կատարեսցէ, ընկալցի ի տեառնէ զօրհնութիւն, հաղորդելով պարգևացն և անվախճան հանգստեանըն՝ երջանիկն Գրիգորի, և հօրն մերոյ Սահակայ. և նոցին հետևելոց ճշմարիտ ուղղափառութեան, որք ի մեծ և յերևելումն աւուր են պսակելոց յամենաբաւական աջոյն՝ անթարգմանելի պայծառութեամբ, մշտնջենաւորեալք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ս. Սահակայ Բ. ա ռճծթ

Քանզի սուրբ լուսաւորիչն Հայոց, մեծն Գրիգորիոս, ծնեալ վերստին զՀայաստանեայց աշխարհս աւազանին ծննդեամբ, և ընծայեալ յորդեգրութիւն հօրն երկնաւորի զլուսաւորեալսն մկրտութեամբ, որ ի հայր, և յորդի, և ի սուրբ Հոգին. լինէր այնուհետև ուրախութիւն մեծ և խնդութիւն աշխարհին Հայոց` տանս Թորգոմայ։ Մանաւանդ թագաւորն բարեպաշտ և պայծառացեալ հաւատով Տ ր դ ա տ, ոչ սակաւ տայր օժիտս մերձակայից իւրոց սպասաւորացն, և որդւոցն քրմաց պարգևէր բազում պարգևս, ասելով, եթէ արդէն առնուցուք ինչս և ստացուածս և երեխայրիս և պտուղս յեկեղեցւոյ Աստուծոյ. և ի հանդերձելումն զկեանսն յաւիտենականս ժառանգելոց էք, զերծեալք ի պաշտամանէ կռամոլ դիւապաշտութեանցն։ Իսկ նոցա պատասխանեալ ասեն՝ ցթագաւորն, և ցմեծն Գրիգորիոս, թէ՝ Աստուծոյ մարդասիրի և բարերարի ոչ անտես արարեալ զստեղծուածս ձեռաց իւրոց, այլ գթացեալ ծանոյց մեզ շնորհօք ձերովք՝ զբարերարութեան իւրոյ զանչափ զօրութիւնն, և զանհամեմատ խնամակալութիւնն, և զողորմութիւն, և ոչ ետ ընդ հարսն մեր կորնչիլ յանօրէնութեան մերում, եղիցի անուն նորա սուրբ և փառաւորեալ յամենայնի։—Այլ սակայն մարմնական կարիք արչափ եմք ի կենցաղումս յայսմիկ, սոյնպէս զմեզ ըստ

պխտոյից տալ զզարմանս կերակրոց, և զզեստուց, և զայլոց կարեացն չափաւորապէս, և ոչ ունիմք արուեստս գործականութեան հնարից ինչ՝ առ ի պատրաստել նոքօք զպարէնս ռոճկաց մեզ, որդւոց մերոց. զի ցորքան ծառայէաք դիւացն, կերակրեալ լինէաք ի զոհից և ի պտղոց նոցա. իսկ այժմ ոչ են մեզ յայտք՝ պտուղք ընծայից որով կեցցուք մեք հանդերձ ընտանեօք մերովք, և փառաւորեսցուք զկենդանին յաւիտենից՝ զանմահ Աստուած։ Յայնժամ երանելին Գրիգորիոս ասէ ցնոսա, դուք որդեակք իմ, զորս վերստին ծնայ սիրով Քրիստոսի, միայն զգուշութեամբ ծառայեցէք Աստուծոյ կենդանւոյ և ճշմարտի, և զլոյսն ձեր դիջիք ի նա բոլորով սրտիւ, և զվերինն խորհեսջիք, ուր Քրիստոս նստի ընդաջմէ հօր, զայն օթեան և զբնակութիւն և զկեանսն խնդրեսջիք ի տեառնէ, և այլս յաւելցի ձեզ՝ ըստ գրեցելումն ի տեառնէ Աստուծոյ մերմէ, ի սուրբ աւետարանին իւրում, իսկ պտուղք ընծայից սրբութեան՝ ի տաճար Աստուծոյ նուիրեալ, ձեզ եղիցին օրհնութիւնք ի ժողովրդոց Աստուծոյ փոխանակ պիղծ զոհիցն այնոցիկ, որովք հաղորդեալք լինէիք դիւացն, այժմ սուրբ պատարագացն երեխայրիք, և այլովք ընծայեալ պտղովք՝ հրեշտակացն սրբոց հաղորդք գտանիք շնորհօքն Քրիստոսի։ Երեխայրիք և պտուղք կարգեալք ըստ այնմ օրինակի, որպէս և մեծ մարգարէն Մովսէս առեալ հրաման յարարչէն աւանդէր ժողովրդեանն զպատարագացն և զպտղոցն, զոր և ղևտական քահանայութեանն միշտ մատուցանէին հարկաւորապէս ընծայս, վասն ոչ ինչ խափան լինելոյ նոցին քահանայիցն ի սպասաւորութենէ խորանին վկայութեան։ Նոյնպէս և կարգեալ և սահմանեալ եղիցին ժողովրդեանս ընծայաբերութիւն՝ ի սրբութիւն սրբութեանցն, որ ի սեղանն մաքրութեան. զի և բոլոր արմտիք կալոյ և հնձանի օրհնեսցին, և տացին անդր ծառովք պտղաբերովք զշահեկանութիւն պտղոց՝ ըստ մարգարէին բանի՛ որ ասէ, ի պատուել քո զտէր յարդար վաստակոց, լցցին շտեմարանք քո լիութեամբ ցորենւոյ, և գինով հնձանք քո յաւետ բղխեսցին։ Եւ որպէս ղևտացիքն տասանորդէին քահանայիցն, թէպէտև ինքեանք առնուին տասանորդս յամենայն իսրայէլէ, այլև ինքեանք տասանորդս մատուցանէին յամենայնէ քահանայիցն,

և զփրկանս անդրանկացն ամենեցուն հրամայէր հատուցանել ի սրբութիւն տեառն. Նովին օրինակաւ և դուք առնիջիք, զամենայն ժողովրդենէ, հասքն ձեր եղիցին ի պատարագաց, կաշի, և աջոյ երի անդամ, և ճրագու, դմակ, և սիրտ, և լերդաբոյթ, և երիկամունքն ճարպովին, ի կողից խախացւոց մասն, լեզուն, և աջոյ ունկն, շրթունքն հոտոտելեօքն, աջոյ ակնն և ամենայն խորհրդական մասունքն։ Իսկ ի կալոյ և ի հնձանէ, և յայլոց արմտեաց տասանորդս հանցեն իւրաքանչիւր ոք ձեզ, յաղագս մաքրելոյ ամենայն արեանցն՝ և աճման ամենայնի պատճառ լինելոյ։ Այլ և ի ձէնջ եղիցին ընծայք ի սեղանն Աստուծոյ. ուստի արժանի եղէք, նախ ընդունել զանարատ և զանապական մարմին և զարիւն փրկչին մերոյ, յիշատակ փրկութեան ձերոյ, որպէս և զնտացւոց քահանայութեան հրամայեցաւ յանժամ Մովսիսիւ ի տեառնէ. և հասք ի ձէնջ ի սեղան տեառն եղիցի գրամ. Ա յամենայն տանց ձերոց, և նուիրեալքն ի ձէնջ և ի փրկութեան պատարագաց՝ երեխայրիք երթիցեն ի վանս գլխաւոր քահանայիցն, այսինքն՝ եպիսկոպոսացն, որպէս ի ժողովրդոցն հարկէին ձեզ՝ հոգեոր հարկս. Նոյնպէս և դուք պարտիք հարկս հոգեորս հարկել եպիսկոպոսացն, որ կոչին այցելուք, և նոքա մի իշխեսցեն խոսել, այլ հարկեսցին յաղքատս ամենայն։ Եւ արդ՝ այսպէս կարգեցաւ ի սրբոյն Գրիգորէ՝ և ի մէնջ հաստատեսցի. Նմանապէս յամենայն հաւատացեալս անշարժ աւանդութիւն որ ի սրբոյն, ժողովրդականք զամենայն պտուղս և զերեխայրիս՝ երիցանց մատուսցեն, անզղջաբար սըրտիւ և մտօք, զի եղիցի ընդունելի պատարագքն իւրեանց առաջի Աստուծոյ. սոյնպէս և քահանայքըն՝ զամենայն նախակարգեալ զհասն մատուսցեն եպիսկոպոսաց՝ առանց յապաղանաց, և մի անկցին ի հեղգութիւն, մանաւանդ յափշտակել կամելով զաւանդ վիճակելոցն. զի մի դատապարտեսցին ընդ անօրէն քահանայսն՝ յաղագս զօշաքաղութեան իւրեանց։ – Եւ տգէտք ոմանք ըստ սովորութեան իւրեանց մի արժանի. եղիցին առնուլ հաս ի մոից, այլ և ոմանց պարապել՝ և շնորհի քահանայութեան արժանացեալք՝ նոքա եղիցին արժանի հասից։ Եւ դպիրք, գրակարդացք սրբասնեալք ամենայն պարկեշտութեամբ, մի զրկեսցին ի բաժնից

իւրեանց, բայց՝ երկկանայքն՝ որ ամենայն ցանկութեան մարմնոյ զհետ չոգան, նոքա ոչ ունին մասնաւորիլ շնորհի սրբութեանցն, իսկ կանայք երիցանց՝ այրիք մնացեալք, և սրբութեամբ պարկեշտացեալք՝ արժանի եղիցին մասին իւրեանց՝ ըստ արժանաւորութեան հասի սեղանոյ և նուիրականաց ոմանց։ Եւ ամենայն ոք որ մասնաւորեալ իցէ հասից և մտից սրբոյ եկեղեցւոյ, նոքա ոչ ունին իշխանութիւն խորել ինչ անձանց չհաս տեսուցն, զորս լինքեանց իցեն նուիրեալ, այլ ի զլխաւորսն վճռասցեն սիրով, և ընկալցին զօրհնութիւնս ի նոցանէ, զի կարդք եկեղեցւոյ հաստատուն և անշարժ եղիցին, և աստուած վառաւորեսցի յամենայնի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ներս. և Ներշ. Մամիկ. եպս. ա ՉՀԸ

Զի ոչ է պարտ բաժանել զժողովուրդն վասն պտղոց և մտից սրբոյ եկեղեցւոյ, յորմէ համարձակեցան բաժանել զպատարագս անառակութեամբ, ըստ տունս լանդգնել բաժանիլ լրբաբար, և զհաց սեղանոյ ի տունս իւրեանց, ոչ թողացուցեալ զժողովրդականս տանել յեկեղեցի, զի օրհնեսցի։

բ ՉՀԹ

Այլ ի նոյն ինքն ի սուրբ եկեղեցւոջ՝ վասն նորին կռիւս և խոցոտմունս ընդ միմեանս, զոր մեք իսկ տեսաք, զոր պարտ էր անիւ և դողութեամբ կատարել զխորհուրդ աստուծոյ պատարագին, այլ ոչ որովայնամոլութեամբ և ժլատութեամբ թշնամանել զսրբութիւնն, խափանեսցին քահանայքն, և զպատարագն՝ որ բաժանեն զպրաց՝ զի առցեն ի նոցանէ զինս վասն սուրբ պատարագին։

Վաչագ. Աղուան. արքայի ԺԷ ոմլդ

Դարձեալ եպիսկոպոսունք և երիցունք զաղատ արանց՝ առաջի արքայի՝ եղեն տրտունջք, եթէ ի չինիս երկուս և երիս եկեղեցիս՝ առնեն վանս, և արքայն առաջի աղատ մարդիկք պոմամանեսցին, և արքայն և եպիսկոպոսաց և աղատաց՝ այսպէս հաճոյ թուեցաւ, թէ զարարեալ եկեղեցին թողցեն, և զպտուղ և զհաս եկեղեցւոյ ի վանս՝ ամենայն եկեղեցիք տացեն։

ԼՈՍԿ ՍԱՀ. ... ՀՈՒՇ ՀԱՄԵՍՏ ... ԱՌՈՒՆ